Հովհաննես Թումանյան

Մանուկն ու ջուրը

Ամպոտ սարեն ուրախ ձենով
Ջուր է գալիս, անցնում շենով:
Մի թուխ մանուկ դուրս է վազել,
Ձեռքն ու երես պաղ լըվացել,

Լըվացել է ձեռքն ու երես,
Ու դարձել է՝ խոսել էսպես.

Դու ո՞ր սարեն կուգաս ջըրի՛կ,
Իմ պաղ ջըրիկ ու անուշիկ:
Ես էն սարեն կուգամ մըթին,

Որ հին ու նոր ձյունն է գլխին:

Դու ո՞ր առուն կերթաս, ջըրի՛կ.
Իմ պաղ ջըրիկ ու անուշիկ:
Ես էն առուն կերթամ զվարթ,
Ուր ափերն են շուշան ու վարդ:

Դու ո՞ր այգին կերթաս, ջըրի՛կ.
Իմ պաղ ջըրիկ ու անուշիկ:

Ես էն այգին կերթամ դալար,
Որ տերն է ժիր մեջն այգեպան:

1911